Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում և շնորհավորում համայն մեր ժողովրդին, Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիներին Սահմանադրության Օրվա առիթով:

Տոնի խորհրդով կարևորենք սահմանադրական այն հիմնարար արժեքներն ու սկզբունքները, որոնցով վերահաստատվեց մեր անկախ պետականությունը և որոնցով առաջնորդվելով՝ մեր ժողովուրդը իրականություն պիտի դարձնի հզոր ու բարօր Հայրենիքի իր արդար տեսիլքը:

Թող Բարձրյալն Աստված օրհնի մեր ժողովրդի ջանքերը՝ ի սեր մեր երկրի առաջընթացի և իր նոր կյանքի կառուցման և բոլոր հույսերի ու իղձերի մարմնավորման:

Աղոթում ենք, որ Տերը Իր շնորհի ներքո խաղաղության մեջ պահպանի մեր երկիրը և աշխարհասփյուռ համայն մեր ժողովրդին:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
5 հուլիսի 2007 թ.